

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 07 » դեկտեմբեր 2022թ.

No 5643 - Ա

ՇՎԵՅՑԱՐԻԱՅԻ Ն.Վ. ՕՐԳԱՆՈՆ, ԿԼՈՈՍՏԵՐՇՏՐԱԱՏ 6, 5349 ԱԲ ՕՍՍ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ
ԻՐԱՎԱՏԵՐ՝ ՕՐԳԱՆՈՆ ՍԵՆՏՐԱԼ ԻՍՏ ԳՄԲՀ, ՎԵՅՇՏՐԱՍԵ 20, 6006
ԼՈՒՋԵՐՆ, ՇՎԵՅՑԱՐԻԱ

«ՆՈՒՎԱՐԻՆԳ ԷՏՈՆՈԳԷՍՏՐԵԼ, ԷԹԻՆԻԼԷՍՏՐԱԴԻՈԼ ՀԵՇՏՈՑԱՅԻՆ
ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ (ՀԵՇՏՈՑԱՅԻՆ ՕՂԱԿ 11,7ՄԳ+2,7ՄԳ; (1)

ՓԱԹԵԹԻԿ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԻ
ՀԵՏԳՐԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 16-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման հավելված 2-ի 17-րդ կետը, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության փորձաքննության 30.11.2022 թվականի N 0103163022 բացասական եզրակացությունը՝ Շվեյցարիայի Ն.Վ. Օրգանոն, Կլոստերշտրաստ 6, 5349 ԱԲ Օսս ընկերության արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Օրգանոն Սենտրալ Իստ ԳմբՀ, Վեյշտրասե 20, 6006 Լուզերն, Շվեյցարիա «Նուվարինգ Էտոնոգէստրել, Էթինիլէստրադիոլ հեշտոցային ներդրման համակարգ (հեշտոցային օղակ 11,7մգ+2,7մգ; (1) փաթեթիկ» դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ 18919/6/1 առ 30.11.2022թ. բացասական եզրակացությունը, որի համաձայն անհրաժեշտ նյութերը և փաստաթղթերը չեն ներկայացվել փորձաքննության առաջին փուլի արդյունքների ծանուցումից հետո 60 օրացույցային օրվա ընթացքում («Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 16-րդ մաս, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման հավելված 2-ի 17-րդ կետ):

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մերժել Շվեյցարիայի Ն.Վ. Օրգանոն, Կլոսստերշտրաստ 6, 5349 ԱԲ Օսս ընկերության արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Օրգանոն Սենտրալ Իստ ԳմբՀ, Վեյշտրասե 20, 6006 Լուզերն, Շվեյցարիա «Նուվարինգ Էտոնոգէստրել, Էթինիլէստրադիոլ հեշտոցային ներդրման համակարգ (հեշտոցային օղակ 11,7մգ+2,7մգ; (1) փաթեթիկ» դեղի հետգրանցումային փոփոխությունը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) սույն հրամանը 2-օրյա աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ԼԵՆԱ ՆԱՆՈՒՇՅԱՆ

 Invalid signature

X 

ԼԵՆԱ ՆԱՆՈՒՇՅԱՆ

Signed by: NANUSHYAN LENA 5114750164